



ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ  DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

# ԿԱՆՏԵԳՆ

ՍՔ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՐԻՉ ԱՈՒՋԵՆՈՐԴԱՆԻՍ  
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԿ



**GANTEGH**  BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE  
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTREAL

ԿԻՐԱԿԻ  26 Մայիս 2019

112

DIMANCHE, 26 Mai 2019



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2  
Website: [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca) / E.mail: [saintgregorychurch@gmail.com](mailto:saintgregorychurch@gmail.com)  
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

ՅԱՐՈՒԹԵՆԷՆ ԵՏՔ 6-ՐԴ ԿԻՐԱԿԻ  
6È DIMANCHE DE PÂQUES

Աստուածաշունչի Ընթերցումներ

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

20.17-38

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՍԱԿԷՆ

3.2-6

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

9.39-10.10

Les lectures de la Bible d'aujourd'hui :

1 JEAN 3.2-6

JEAN 9.39-10.10

Պատարագիչ՝

Հոգեւոր Հովիւ

ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ ՔԶՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Célébrant: Prêtre Paroissial

RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Առաւօտեան Ժամերգութիւն 9:30-ին

Office Matines à 9 :30

Ս. Պատարագ ժամը 10:30-ին

La Sainte Messe à 10:30

Հոգեհանգիստ ժամը 12:00-ին

Requiem à 12:00

DIACRES - ACOLYTES

Chef de chœur: M. Sarkis Barsemian

Organistes: M. Karen Manucharyan

Mme. Hourı Bedrossian

# ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES  
DE DIMANCHE



THE SUNDAY  
READINGS

## ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ 1- ԻՆ ՆԱՄԱԿԷՆ 3.2-6

Միրելին՝ ր, հիմա մենք Աստուծոյ զաւակներն ենք, եւ տակաւին բացայայտ չէ թէ ի՛նչ պիտի ըլլանք. բայց գիտենք թէ երբ ինք երեւնայ՝ իրեն պէս պիտի ըլլանք, որովհետեւ պիտի տեսնենք զինք՝ ինչպէս որ է: Ո՛վ որ այս յոյսը ունի անոր վրայ, կը մաքրագործէ ինքզինք՝ ինչպէս ան մաքուր է:

Ո՛վ որ մեղք կը գործէ՝ կը գործէ նաեւ անօրէնութիւն, եւ բո՛ւն մեղքը՝ անօրէնութիւնն է: Եւ գիտէք թէ ան յայտնուեցաւ՝ որպէսզի քաւէ մեր մեղքերը. բայց անոր մեջ մեղք չկայ: Ո՛վ որ կը բնակի անոր մեջ՝ չի մեղանչեր. ո՛վ որ մեղանչէ, տեսած չէ զայն ու ճանչցած չէ զայն:

## ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 9.39-10.10

Յիսուս ըսաւ. «Ես այս աշխարհը եկայ՝ դատաստանի համար, որպէսզի չտեսնողները՝ տեսնեն, իսկ տեսնողները՝ կտրանան»: Փարիսեցիներէն ոմանք, որ իրեն հետ էին, լսելով ասիկա՝ ըսին իրեն. «Միթէ մե՛նք ալ կոյր ենք»: Յիսուս ըսաւ անոնց. «Եթէ կոյր ըլլայիք՝ մեղք չէիք ունենար. բայց հիմա կըսէք. “Կը տեսնենք”. ուրեմն ձեր մեղքը կը մնայ ձեր վրայ»:

«Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. “Ա՛ն որ դռնէն չի մտներ ոչխարներուն բակը՝ հապա ուրիշ տեղէ կը բարձրանայ, անիկա գող եւ աւագակ է. բայց ա՛ն որ դռնէն կը մտնէ՝ ոչխարներուն հովին է”: Դո՛նապանը կը բանայ անոր, եւ ոչխարները կը լսեն անոր ձայնը. իր ոչխարները կը կանչէ իրենց անտունով ու դուրս կը հանէ զանոնք: Երբ հանէ իր ոչխարները՝ կերթայ անոնց առջեւէն, ու ոչխարները կը հետեւին իրեն՝ որովհետեւ կը ճանչնան իր ձայնը: Սակայն չեն հետեւիր օտարի մը՝ հապա կը փախչին անկէ, որովհետեւ չեն ճանչնար օտարները»:

րու ձայնը»: Յիսուս ըսաւ անոնց այս առակը, բայց անոնք չէին հասկընար թէ ի՛նչ էր՝ որ կը խօսէր իրենց:

Ուրեմն Յիսուս դարձեալ ըսաւ անոնց. «Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի "Ե՛ս եմ ոչխարներուն դուռը": Բոլոր անոնք՝ որ եկան ինձմէ առաջ, գող եւ աւագակ էին, բայց ոչխարները մտիկ չըրին անոնց: "Ե՛ս եմ դուռը". եթէ մէկը ներս մտնէ ինձմէ՝ պիտի փրկուի. պիտի մտնէ ու ելլէ, եւ արօս գտնէ: Գողը ուրիշ բանի համար չի գար, բայց միայն՝ գողնալու, սպաննելու եւ կորսնցնելու համար: Ես եկայ որ կեա՛նք ունենան, եւ ճոխութեա՛ւ մը ունենան:

## 1 JEAN

### 3.2-6

Voyez quelle charité le Père a eue pour nous, que nous soyons appelé les enfants de Dieu; mais le monde ne nous connaît point, parce qu'il ne l'a point connu. Mes bien-aimés, nous sommes maintenant les enfants de Dieu, mais ce que nous serons n'est pas encore manifesté; or nous savons que lorsque [le fils de Dieu] sera apparu, nous lui serons semblables; car nous le verrons tel qu'il est. Et quiconque a cette espérance en lui, se purifie, comme lui aussi est pur.

Quiconque fait un péché, agit contre la Loi; car le péché est ce qui est contre la Loi. Or vous savez qu'il est apparu, afin qu'il ôtât nos péchés; et il n'y a point de péché en lui. Quiconque demeure en lui, ne pèche point : quiconque pêche, ne l'a point vu, ni ne l'a point connu.

## JEAN

### 9.39-10.10

Et Jésus dit : je suis venu en ce monde pour exercer le jugement, afin que ceux qui ne voient point, voient; et que ceux qui voient, deviennent aveugles. Ce que quelques-uns d'entre les Pharisiens qui étaient avec lui, ayant entendu, ils lui dirent : et nous, sommes-nous aussi aveugles? Jésus leur répondit : si vous étiez aveugles, vous n'auriez point de péché; mais maintenant vous dites : nous voyons; et c'est à cause de cela que votre péché demeure.

En vérité, en vérité je vous dis, que celui qui n'entre point par la porte dans la bergerie des brebis, mais y monte par ailleurs, est un larron et un voleur. Mais celui qui entre par la porte, est le berger des brebis. Le

portier ouvre à celui-là, et les brebis entendent sa voix, et il appelle ses propres brebis par leur nom, et les mène dehors. Et quand il a mis ses brebis dehors, il va devant elles, et les brebis le suivent, parce qu'elles connaissent sa voix. Mais elles ne suivront point un étranger, au contraire, elles le fuiront; parce qu'elles ne connaissent point la voix des étrangers. Jésus leur dit cette parabole, mais ils ne comprirent point ce qu'il leur disait.

Jésus donc leur dit encore : en vérité, en vérité je vous dis, que je suis la Porte [par où entrent] les brebis. Tout autant qu'il en est venu avant moi, sont des larrons et des voleurs; mais les brebis ne les ont point écoutés. Je suis la Porte : si quelqu'un entre par moi, il sera sauvé, et il entrera et sortira, et il trouvera de la pâture. Le larron ne vient que pour dérober, et pour tuer et détruire; je suis venu afin qu'elles aient la vie, et qu'elles l'aient même en abondance.



## Հոգեւոր Հովիւի Պատգամը

### «Բարկութիւն»

«Բարկութիւն»ը, իր ամենալայն իմաստով, մարդու հակազդեցութիւնն է անհաճոյ, անընդունելի եւ բարոյապէս վիրաւորիչ արարքի մը հանդէպ: Անշուշտ, բարկութեան արտայայտութեան ձեւը կարելոր է մանաւանդ մարդկային փոխարաբերութիւններու մէջ: Ուստի բարկութիւնը պէ՛տք է համեմատական ըլլայ բարկութեան առիթ տուող արարքին հետ, համապատասխանէ անոր թողած ազդեցութեան: Արդարեւ, բարկութիւնը բնական զգացում մըն է. որեւէ արարքի հակազդեցութիւն ցոյց տալ մարդկային է եւ որոշ սահմաններու մէջ հասկնալի, այսինքն բնական:

Բարկութիւնը զգացում մըն է՝ բնական, բայց անոր արտայայտութիւնը պէ՛տք է հակակշռուած ըլլայ մարդու կամքին եւ բա-

նականութեան հետ: Ուստի, բարկութեան արտայայտութիւնը պէտք է ըլլայ ճիշդ անձի, յարմար ժամանակի, պատշաճ չափով եւ համեմատութեամբ՝ այն ինչ որ կը համապատասխանէ բարկութեան նիւթին կամ պատճառին: Չափազանցուած բարկութիւնը մարդս նեղ դրութեան կը մատնէ, ինչպէս առածը կը սէ. «Բարկութիւնը կու գայ՝ մարդուս աչքը կը կարմրի, բարկութիւնը կը մեղմանայ՝ մարդուս դէմքը կը կարմրի»: Եւ այս կը նշանակէ՝ որ բարկութիւնը երբ չափազանցուած է՝ մարդս ամօթապարտ վիճակի կը մատնէ:

Արդարեւ, «բարկութիւն»ը աստուածային է: «Քանզի Աստուծոյ բարկութիւնը երկինքէն կը յայտնուի՝ մարդոց բոլոր ամբարշտութեանը եւ անիրաւութեանը վրայ, որոնք ճշմարտութիւնը անիրաւութեամբ բռնէր են» (ՀՌՈՄ. Ա. 18):

Աստուած բարկացած է մարդոց ամէն մեղքին դէմ եւ ամէն մեղք պիտի պատժէ: Ուստի Ան պիտի դատապարտէ «հեթա-նոս»ները, նախ՝ ամբարշտութեան համար, եւ երկրորդ՝ չար գործերուն համար:

Բայց «Աստուծոյ բարկութիւն»ը՝ ո՛չ թէ ռիսկալութեամբ եւ չարասրտութեամբ, այլ աստուածային անհուն կարեկցութեամբ եւ գթութեամբ կ'արտայայտուի: Աստուած կը բարկանայ «արդար զայրոյթ»ով, քանի որ Ան ո՛չ ռիսկալ է եւ ո՛չ ալ չարասիրտ, այլ մեղքերու դէմ սուրբ տհաճութիւն մը ունի, որ մաշող կրակի նման պիտի բորբոքի մեղաւորներուն դէմ, թէպէտ Աստուած ա-սոնց համար ունի նաեւ անհուն կարեկցութիւն եւ գթութիւն:

Աստուծոյ արդար բարկութիւնը կը յայտնուի անոր դատաստաններէն եւ անոր ձայնէն՝ որ մեղաւորներու խղճին կը խօսի:

Մարդիկ իրենց չար գործերով մերժած կամ ապարդիւն ըրած են այն ազդեցութիւնը, որ Աստուծոյ գոյութիւնը, անոր ստորոգելիները եւ արդար պահանջումները ճանչնալէն կրնար յառաջ գալ: «Մերժել» կամ «ետ բռնել» կը նշանակէ՝ այնպէս ընել որ ճշմարտութիւնը ազդեցութիւն չունենայ: Անոնք յանցաւոր կը նկատուին, ո՛չ թէ տգէտ են ճշմարտութեան, այլ որովհետեւ կը պատերազմին այն ճշմարտութեան դէմ, գոր բուն իսկ իրենց բնութիւնը եւ Աստուծոյ արարածները կը յայտնեն անոնց:

Արիստոտէլ յոյն իմաստասէրը կը սէ. «Աստուած որ ամէն մահկանացու էակի անտեսանելի է՝ իր գործերով կը տեսնուի»:

Նաբովէն գիշեր մը իր անհաւատ պաշտօնէաներէն ոմանց խօսակցութիւնը մտիկ ընելէն ետք, ձեռքով աստղերը միայն ցուցնելով Բարձրաձայն գոչեց. «Տեարք, ո՞վ ըրաւ բոլոր ասոնք»:

Արդարեւ, մարդուն գործերը անոր մտքին խորհուրդները կը ցուցնեն. այսպէս ալ տիեզերքի բոլոր բաները Արարչին խորհուրդները ցոյց կու տան:

Եւ այս արարչութիւնը ունի անշուշտ իր օրէնքները՝ որոնց օրէնսդիրն է նոյն ինքն Արարիչը: Այդ օրէնքները պահպանելու համար պէտք է ընդհանուր կարգապահութեան տիեզերական կանոն մը. եւ անշուշտ «աստուածային արդար բարկութիւն»ը այստեղ կը յայտնուի՝ որպէս ուղեցոյց այդ կանոնին: Բայց ինչպէս յիշուեցաւ, «աստուածային բարկութիւն»ը երբեք ռիսկալութեան եւ չարասրտութեան հանգամանք չունի, քանի որ ան միայն հայրական ազդարարութիւն մըն է, թերեւս անդրադարձնելու համար ամէն անոնք, որոնք շեղած կամ մոլորած են ուղիղ ճամբէն եւ հակադրած բնութեան աստուածահաստատ օրէնքներուն: Ուստի աստուածային բարկութիւնը երբեք կորուստի մատնելու, ոչնչացնելու նպատակ չունի, այլ՝ միայն կորուստը կանխելու եւ արգելք ըլլալու, գտնելու եւ շահելու ւ:

Ահաւասիկ, այս ուղղութեամբ, մա ըղն ալ պէտք է զգոյշ գտնուի բարկութեան պարագային, եւ բարկութիւնը ո՛չ թէ ռիսկալութեան եւ պատիժի միջոց, այլեւ՝ սխալած մէկը, յանցաւոր մարդը անդրադարձնելու իր սխալին կամ յանցանքին, որպէսզի ան դարձեալ գտնէ ուղիղ ճամբան: Ուրեմն բարկութիւնը պէտք է օգտագործել միշտ որպէս շինիչ, նորոգիչ միջոց եւ ո՛չ թէ պատժելու շարժառիթ:

Բարկութիւնը պէտք չէ՛ որ գերի առնէ մարդուս կամքը, բանականութիւնը, որպէսզի մարդ աւելի վերջ ամօթ չզգայ բարկութեան ազդեցութեամբ կատարած չարագործութիւններուն պատճառով:

Ըսուեցաւ որ բարկութիւնը բնական հակազդեցութիւն մըն է, եւ ուրեմն բարկութիւնը անբաժան է մարդկային կեանքէն, եւ մանաւանդ մարդկային փոխյարաբերութիւններու մէջ: Եւ բարկութիւնը քանի որ բնական է, ուրեմն ունի իր օգուտը, բաւ է որ անիկա տեղին, չափաւոր եւ համապատասխան արտայայտուի:

Արդարեւ, բարկութիւնը զսպանա՛կ մըն է մարդուս կիրքերուն, եւ մասամբ հանդարտեցուցիչ, քանի որ ան կը կանխէ աւելի մեծ եւ վտանգաւոր պոռթկումները:

Հաւասարակշռուած եւ չափաւոր բարկութիւնը լուծում կը խոստանայ մարդոց միջեւ ծագած զանազան անհամաձայնութիւններու, ինտիքներու. ան առիթ կ'ընծայէ որ մարդ անդրադառնայ եւ զգաստանայ իր յարաբերութիւններուն մէջ եւ այս կերպով մշակուի լաւ բարեկամութիւններ, հաստատուին երջանիկ եւ սիրալի՛ր ընկերութիւններ...:

*Աղբիւր՝*

ՄԱՇՏՈՅ ՔԱՀԱՆԱՅ ԳԱԼՓԱՔՃԵԱՆԻ  
քարոզներէն

### **Խաչը կենաց ծառ է բոլորիս համար**

Սուրբ Գրիգոր Տաթևացի



### **ՇԱԲՅՈՒՄԱՆ ՏՕՆԵԼԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ**

Համբարձման տօնին առթիւ կը շնորհաւորենք բոլոր  
Համբարձում, Համբօ, Կրէկ, Համբիկ եւ Ամօ  
անունները կրող անձերուն անուանակոչութիւնը:

**CELEBRATED NAMES: Hampartsoum, Hampo, Hampig, & Amo.**



# ՆՈՒԲՐԱՏՈՒԹԻՒՆ ԵՎԵՂԵՑԻՈՅ

**DON  
À L'ÉGLISE**



**DONATION  
FOR THE CHURCH**

## CHURCH:

Manoir Gouin Seniors \$90, Mrs. Silva Karaoghlanian \$30

## IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:

### THE LATE AZNIV BALIAN:

Mr. & Mrs. Ara Soukiassian \$250, Mrs. Vartouhie Balian, Mr. & Mrs. Kevork & Maral Partamian \$200, Mr. Gary Soukiassian, Mrs. Zepur Derashodian \$100, Mr. & Mrs. Garo & Nevart Paragamyman, Mrs. Alis Afker \$50, Mrs. Irma Basmajian, Miss Takouhi Aghazarian \$25

### HOKEHANKISD (REQUIEM SERVICES)

#### IN MEMORY OF:

THE LATE BERDJ GOSDANIAN, THE LATE GARO GOSDANIAN,

THE LATE KRIKOR & ARMAVENI SUTJIAN

THE LATE CHAKE KALAYDJIAN:

Mrs. Elizabeth Sutjian – Gosdanian \$100

THE LATE HAIG NACCASHIAN, THE LATE MOURAD HAYRABEDYAN,

THE LATE NACCASHIAN, TOROSSIAN,

ORCHANIAN, HAYRABEDYAN & TOVMASSYAN FAMILIES:

Mrs. Sossie Naccashian \$100

### THE LATE SONA & ARMAVENI DEMIRJIAN:

Dr. Arto Demirjian \$250, Mr. & Mrs. Avedis & Arsaluys Djihanian, Dr. & Mrs. Archavir & Nadia Gundjian, Mr. Vahe Keresteciyman \$50

### YOUGHAKIN EASTER:

Mrs. Henika Sozkes, Mr. & Mrs. Romik Avetissian, Mr. Melki Keopruilian \$50

## ՇԱԲՈՒԻՍ ԽՈՐՀՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ

«Գեղեցիկ աչքեր ունենալու համար փորձենք ուրիշներու մեջ բարին տեսնել, գեղեցիկ շրթունքներ ունենալու համար միայն բարի խօսքեր ըսեք, իսկ հաւասարակշռութիւնը պահպանելու համար քալեցէք այն գիտակցութեամբ, որ Դուք երբեք մինակ չէք»:

*Օտրի Հեփպըրն*

«Ի վերջոյ, մենք հիմա հիւր ենք, իսկ յետոյ բոլորս կ'երթանք տուն: Բայց միայն, իմ թանկագիններս, վիշտը կը պատէ մեզ մեր տան մեջ, եթէ մեր հիւրութեան ժամանակ վատ արարքներ ըրած ենք...»

*Հայր Նիքոլայ Գուրեանով*



## ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

### ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔ

Քու ժողովուրդէդ փարատե՛ ցաւերը  
եւ բժշկէ հիւանդութիւնները,

ո՛վ Տէր, մեր Աստուածը, եւ կատարեալ առողջութի՛ւն  
շնորհէ բոլորին՝ քու ամենայաղթ խաչիդ նշանովը,  
որով մարդոց տկարութիւնները քու վրադ առի՛ր  
եւ դատապարտեցիր կեանքի ու փրկութեան Թշնամին:

Դո՛ւն եւ մեր կեանքն ու փրկութիւնը,  
Բարերար եւ բազումողորմ Աստուած.

Միայն դո՛ւն կրնաս մեր Մեղքերը ներել  
եւ ցաւերն ու հիւանդութիւնները վանել մեզմէ,  
որովհետեւ քեզի ծանօթ են մեր կարիքները:

Ո՛վ բարիքներու պարգեւիչ, Իրաքանչիւրին կարիքներուն  
համաձայն՝ քու առատ ողորմութի՛ւնդ պարգեւէ  
արարածներուդ, որոնք միշտ կը փառաւորեն ու կ'օրհնաբանեն  
քեզ, ամենասո՛ւրբ Երրորդութիւն, այժմ եւ միշտ  
եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

### PRIÈRE POUR LA GUÉRISON

Seigneur notre Dieu, fais disparaître et guéris

les infirmités de ton peuple

et accorde à tous une

santé parfaite, par le signe de ta croix victorieuse,

du genre humain et condamné l'ennemi

de notre vie et de notre salut.

Tu es notre vie et notre salut, le bienfaiteur

et le très miséricordieux,

toi qui seul peux remettre

les péchés et chasser loin de nous les maladies et les

langueurs, toi qui connais les besoins

de notre faiblesse. Donateur de biens, accorde ta miséricorde

abondante à tes créatures, selon que chacune en

a besoin, car elles glorifient chaque jour et louent

la très sainte Trinité, maintenant et toujours,

et en toute éternité. Amen.

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE  
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE  
REPOSE OF SOUL

ԿԻՐԱԿԻ, 26 Մայիս 2019



Տիկ. Սիլվա Միսճաւաքեանի,  
Սարգիս եւ Հերմին Միսճաւաքեանի,  
Նազարէթ Միսճաւաքեանի եւ ընտանիքին  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր եւ մեծ հօր՝

ՎԱՀԱՆ ՄԽՃԱԻԱՔԵԱՆԻ  
(VAHAN MEKHGEAVAKIAN)

Մահուան 40-ին առիթով

(սուրճի սպասարկութիւն «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ):



Տիկ. Քնարիկ Աքքէլեան Մկրտիչեանի,  
Տիկ. Թագուհի Սայեան Մկրտիչեանի,  
Եւ համայն Աքքէլեան, Սայեան, Մկրտիչեան եւ Դաւթեան  
ընտանիքներու,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
իրենց սիրեցեալ քրոջ, մօրաքրոջ, հօրաքրոջ եւ հարազատին՝

ՏՕՔԹ. ՄԱՐԻԱՍ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ

(DR. MARIAM MAKERDIJIAN)

Հոգւոյն ի հանգիստ:



ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՑ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ



## **ՆԻՍՏ ՈՒ ԿԱՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԷՋ**

Ամենուն յատուկ ուշադրութեան եւ նկատառութեան կը հր-րաւիրենք հետեւեալ պարագաները.

1. Հաւատացեալները (Մկրտեալները) պարտին խոստովանիլ՝ Ս. Հաղորդու-թին ստանալէ առաջ:
2. Կանայք երբ հաղորդուելու կը մերձենան, անհրաժեշտ է որ իրենց գլուխը ծածկեն քողով կամ գլխարկով:
3. Երբ Եկեղեցի կ'երթանք մասնակցելու Ս. Պատարագին կամ այլ արարողութիւններու, պարտինք վայելուչ եւ լուրջ զգեստ-ներ հագուիլ, ուշադիր ըլլալ մեր նիստ ու կացին, զգուշանալ ողջագորումներէ եւ իրարու հետ խօսակցելէ:
4. Երբ Եկեղեցին ենք ու կը սպասենք մասնակցելու արարողութեան մը կամ արարողութեան աւարտին ենք եւ կը պատ-րաստուինք դուրս գալ Եկեղեցիէն, պէտք է խուսափիլ աղմկելէ կամ իրար հետ խօսակցելէ : Եկեղեցին աղօթքի Սուրբ վայր է: Այնտեղ՝ շարունակ եւ միշտ ԼՈՒՌԹԻՒՆ եւ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ պէտք է տիրէ:

## **OBSERVANCES PARTICULIÈRES À RESPECTER**

Nous attirons tout particulièrement Votre attention sur les points suivants:

- 1) Les fidèles (baptisés) doivent se confesser avant de recevoir la Sainte Communion.
- 2) Les femmes doivent avoir la tête couverte pour communier.
- 3) Chaque fois que nous entrons dans l'Église pour assister à une cérémonie religieuse, nous devons être attentifs à la dignité de notre tenue, à la célébration en cours et éviter de saluer ostensiblement nos proches ou nos amis dans ce lieu saint.
- 4) Il est rappelé que l'Église est un lieu Saint où doivent toujours régner le calme et la sérénité.

Il est instamment demandé aux fidèles qui désirent se saluer, avant ou après les cérémonies, de le faire à l'extérieur de ce lieu de prières.



**Ա. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻԶ ԱՌԱՋՆՈՐՐԱՆԻՍ  
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՏԻՈՅ**

**ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ**

**ԵՒ «ԿԱՄԱՐ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ**

**ԾԱՌԱՏՆԿՈՒՄԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ**

**Պիտի կատարողի**



**Կիրակի, 26 Մայիս 2019**

**Ա. Պատարագեն ետք,  
Եկեղեցւոյ պարտեզին մէջ,  
որպէս խորհրդանիշ  
Կիրակնօրեայ Վարժարանի  
շարունակական ընթացքին,  
ընկերային միջավայրի  
ստեղծման եւ կանաչազարդ  
բնութեան պահպանման:**



**Այս գեղեցիկ սովորոյթը, որպէս Կիրակնօրեայ  
Վարժարանի եւ «Կամար» Երիտասարդաց  
Յանձնախումբի աւանդոյթը պիտի նշուի ամեն  
տարի Ծառատնկումի արարողութեամբ:**





Հայց. Առաքելական  
Ս. Գրիգոր Լուսավորիչ  
Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի

## ՀԱՄԱՐՁՈՒՄ

Հինգշաբթի, 30 Մայիս 2019

**ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՄԱՅ  
ՊԱՏԱՐԱԳ**

*առաւօտ. ժամը 11-ին*

**ՏՕՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ ԵՒ  
ՎԻՃԱԿ**

«Մարի Մանուկեան» սրահին մէջ  
Մուտքի Լուեր՝ \$10

### ՈՒՇԱՐՐՈՒԹԻՒՆ

Օթօպիւսի սպասարկութիւն.

-Արարատ Բնակարաններէն  
առաւօտեան ժամը 10:15-ին

-Manoir Gouin-էն առաւօտեան  
ժամը 10:30-ին



## ASCENSION OF CHRIST

Thursday, May 30, 2019

**DIVINE LITURGY**

at 11:00 am

FESTIVE LUNCH & VIJAG in “Marie Manoogian” hall

Entrance Contribution \$10

### ATTENTION:

Transportation available

-Habitation Ararat – 10:15 am

-Manoir Gouin – 10:30 am

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

Website: [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca) / E.mail: [saintgregorychurch@gmail.com](mailto:saintgregorychurch@gmail.com)

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻՉ  
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ Ի ՄՈՆՏՐԵԱԼ  
ST. GREGORY THE ILLUMINATOR  
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

## ԿԻՐԱԿՆԱՍՈՒՑԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ



Սիրով կը յայտնենք, թե Յունիս ամիսն սկսեալ, իրաքանչիւր ամսուայ վերջին Շաբաթ օրը երեկոյեան ժամը՝ 5-ին, Երեկոյեան (Կիրակամտից) Ժամերգութիւն պիտի կատարուի Մոնթրէալի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ մէջ:

Այսու կը հրաւիրենք մեր հաւատացեալները ներկայ գտնուելու հոգեպարար այս արարողութեան:

Օրհնութեամբ՝  
Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեան, Հոգեւոր Հովիւ

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2  
Website: [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca) / E.mail: [saintgregorychurch@gmail.com](mailto:saintgregorychurch@gmail.com)  
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր  
Եկեղեցի  
St. Gregory the Illuminator Armenian Cathedral



ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ  
ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ  
ԵՒ  
ՀՈԳԵԻՈՐ ՉՐՈՅՑ

Մեր սիրելի հաւատացեալներուն  
ուշադրութեան կը յանձնենք թէ մեր  
Հոգեւոր Չրոյցները  
Կը վերսկսինք  
Հինգշաբթի, 25 Ապրիլ 2019 երեկոյեան ժամը  
7:00-ին  
Եկեղեցւոյ մէջ:


ÉTUDES BIBLIQUES  
ET

CAUSERIES SPIRITUELLES

Nous avisons à nos fidèles que  
nous recommencerons nos soirées d'études  
Bibliques et Causeries Spirituelles  
Le jeudi, 25 avril 2019 à 19h00 à l'église.

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax:  
(514)279-8008/ [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)  
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

# ԵԿԷՔ ՊԱՅՄԱՌԱՑՆԵՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ



Եկեղեցոյս պայծառութեան եւ առաքելութեան յարատեւման նախանձախնդիր մեր սիրելի հաւատացեալներ,  
Միրով կը յայտնենք, թէ մեր եկեղեցին կարիքն ունի հետեւեալ իրերուն.-

- Արծաթեայ Սկիի
- Օդորակիչի անհրաժեշտ սարքաւորման (Air Conditioner)
- Ս. Սեղանի ոսկեգոյն ասեղնագործ ծածկոց
- Հոգեւորականաց շուրջառներ եւ հողաթափեր
- Սկիիի ծածկոցներ եւ Աւետարանի բռնիչ
- Մեծ Պահքի կամ Աւագ շաբթուան յարդարանք (սեղան եւ ծածկոց)
- Յիսուս Մանկան մտուր
- Եկեղեցոյ տօնաձառ
- Ճրագալոյցի եւ Տեսորնդառաջի համար նախատեսուած դուրսի մուրք
- Ջրօրինէրի Սափոր
- Ս. Խորանի 2 մեծ վարագոյր՝ կարմիր եւ սեւ

Արդ, անոնք որոնք կը փափաքին իրենց սրտաբուխ նուիրատուութեամբ մասնակից դառնալ եկեղեցոյ սուրբ առաքելութեան, հաճին կապ պահել եկեղեցոյ հովիւին կամ քարտուղարութեան հետ (514) 279- 3066:

*«Այս երկրի մէջ ցանկ՝ քու հացդ, որպէսզի երկնքի մէջ զայն հարիւրով պտուղ տուած գտնես»:*

«Հոգեւոր հայելի»

Օրհնութեամբ եւ շնորհակալութեամբ՝  
Հոգեւոր Հովիւ եւ Օխական Խորհուրդ



# ԵԿԷՔ ՊԱՅԾԱՌԱՑՆԵՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ



Միրելի հաւատացեալներ,

Եկեղեցւոյ Սուրբ Սեղանը, որ պատարագեալ Փրկիչի իջեւանն է, ամէն Կիրակի եւ յատկապէս տաղաւար տօներուն զեղեցիկ եւ պայծառ պահելու համար կոչ կ'ուղղենք Ձեզի, որ Ձեր գործօն եւ արդիւնաւետ մասնակցութեամբ կամ ծաղիկներով զարդարէք Տիրոջ Ս. Սեղանը, զորս աղբիւրն է Կենաց եւ Իմաստութեան:

Արդ, անոնք որոնք կը փափաքին իրենց սրտաբուխ նուիրատուութեամբ կամ ծաղիկներու մատուցմամբ զարդարուն պահեն Տիրոջ Ս. Խորանը, կրնան կապ պահել Եկեղեցւոյ քարտուղարութեան հետ (514) 279- 3066:

**Օրհնութեամբ եւ շնորհակալութեամբ՝  
Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ**



ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ  
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ Ի ՄՈՆՏՐԵԱԼ  
ST. GREGORY THE ILLUMINATOR  
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

## ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

6-14 տարեկան երեխաներու համար  
ամեն Կիրակի առաւօտեան ժամը 10:30-էն սկսեալ



### ԾՐԱԳԻՐ

- ԱՐԵԻԼԱՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ 10:30- 12:15
- ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ 12:30- 13:15
- ՍԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ 13:30- 14:30

☞ ԿԸ ՆԱԽԱՏԵՍՈՒԻ ԴԱՇՆԱԿԻ (ԴԱՇՆԱՄՈՒԻ) ԵՒ ՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐ,  
ԺԱՄԵՐԸ ԿԸ ՏԵՂԵԿԱՑՈՒԻՆ ՑԱՌԱՋԻԿԱՑԻՆ:

ՀԻՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ, ՀԱՃԵԼԻ ԵՒ ԸՆԿԵՐԱՑԻՆ ՄՐՆՈՒՐՏ, ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐ,  
ՉՈՒԱՐՃԱԼԻ ՈՒ ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ ՑԱՋՈՐԴԱԿԱՆ ՊՏՈՑՏԵՐ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՑԱԻԵԼԵԱԼ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՍԱՐ,  
ԿԱՊ ՊԱՀԵԼ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ՀԵՏ՝ (514) 279 3066,  
ԿԱՄ ՏԻԱՐ ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՀԵՏ՝ (514) 619-7098:

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2  
Website: [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca) / E.mail: [saintgregorychurch@gmail.com](mailto:saintgregorychurch@gmail.com)  
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal